ՄԱՐԱՏ ԴՈՒՐՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիա, հոգեբանության ամբիոնի հայցորդ

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության տվյալ փուլը նախատեսում է գործունեության բարդ պայմաններում որոշումների ընդունման առանձնահատկությունների ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումների վերլուծություն, ինչպես նաև որոշումների կայացման ցուցանիշների ադապտացիան և համեմատական վերլուծությունը ըստ որոշումների կայացման Մելբուրնյան հարցադարանի (MDMQ) հայկական տարբերակի: Քննարկվել և համեմատվել են տարբեր խմբերում որոշումների կայացման ոճերի ուսումնասիրության ցուցանիշները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. թեստավորում, որոշման ընդունումում, ոճ, քոփինգ, վարք:

Որոշումների կայացման հոգեբանական առանձնահատկությունների խնդրի մշակվածությունը մեթոդաբանական և ժամանակագրական տեսակետից բարդ և բազմակողմանի բնույթ է կրում: Ուսումնասիրությունները հիմնականում կենտրոնացված են որոշումների կայացման գործընթացի օպտիմալացմանը, որն իրենից ներկայացնում է թույլատրելի տարբերակների և այլընտրանքների որոշակի քանակության միջից առավել համապատասխան տարբերակ գտնելուն կողմնորոշված մեթոդների և միջոցների համադրություն: Որոշումների կայացման տարբեր առանձնահատությունների խնդիրը արդիական է մարդու գործունեության գրեթե բոլոր ոլորտներում (ուսում, կառավարում, մարկեթինգ, սպորտ և այլ) և, համապատասխանաբար, բոլոր դեպքերում, գործունեության արդյունավետությունը կախված է համարժեք որոշումներից:

Անորոշության պայմաններում գործունեության տարբեր չափանիշների գնահատումը շատ դեպքերում պայմանավորված է որոշումների կայացման արդյունավետությունից, ինչն էլ կախված է ինտելեկտուալ-անձնայինկարողություններից: Տ.Վ.Կորնիլովան առաջարկել է որոշումների կայացման մուլտիպլիկատիվ մոդելը, որը բաղկացած է հետևյալ երեք հիմնական մտահայեցողական "առանցքներից". ինտելեկտուալ կողմնորոշում, անձնային հատկություններ /որակներ/, որոշումների արդիագենեզի կամ ինտելեկտա-անձնային ջանքերի շնորհիվ ընտրության մակարդակը բնորոշող նորագոյացությունների արտահայտվածություն [4, էջ 2-3]:

Որոշումների կայացման տեսության զարգացման ժամանակակից փուլը խթան է հանդիսանում ուսումնասիրության նոր հեռանկարային ուղղությունների ծավալման համար, որոնք ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական բաղադրիչներ: Գիտափորձերի ժամանակ, որպես կանոն, կիրառվում են մեթոդների համալիր՝ որոշումների կայացման առանձնահատկությունների և անձնային յուրահատկությունների միջև կապը բացահայտելու նպատակով: Օրինակ, հետազոտական համալիրներից մեկում ներառվել են "ինքնաարտացոլանքի զարգացման մակարդակի որոշման" թեստը, "որոշումների կայացման անձնային գործոններ" մեթոդիկան, "Սթրեսային իրավիճակների հաղթահարման ռազմավարություն" SACS սանդղակը և "ЛПР" - որոշումների կայացման հարցարանը [6]:

Ուսումնասիուրթյան տվյալ փուլի նպատակն է որոշումների կայացման առանձնահատկությունների ուսումնա-

սիրության մեթոդաբանական մոտեցումների վերլուծությունը, ինչպես նաև նրա հայերեն տարբերակի տեղայնացումը և համապատասխանաբար փորձարկումը: Այս նպատակով, բազմաթիվ հետազոտական աշխատանքների ուսումնասիրությունների հիման վրա, ընտրությունը կանգ է առել որոշումների կայացման Մելբուրնյան հարցադարանի վրա (MDMQ): Թեստի տեղայնացնամ գործընթացը անց է կացվել ժամանակակից հոգեախտորոշման մեջ ընդունված հիմնական դրույթներին համապատասխան [1]: Գիտափորձի մասնակիցների ընտրությունը իրականացվել է նմանատիպ հետազոտությունների նույնականացման սկզբունքով: Այսպիսով, հետազոտության մասնակից եղել են ուսանող-իրավաբանները և օպերատիվ գործունեությունում նեգրավված աշխատակիցները (n_1=56; n_2=41): Գնահատվել են նմանությունները և տարբերությունները ըստ սեռի, տարիքի և համապատասխան խմբերի: Հետագայում, կատարվել է հարցարանի հոգեչափական որակների հաստատունության սահմանված գործակիցների վերլուծություն: Որոշումների կայացման ոճի և գնահատման սանդղակի համապատասխանության վերաբերյալ ենթադրությունները ստուգման են ենթարկվել համեմատական վերլուծության և փորձագիտական հարցման մեթոդի կիրառմամբ՝ տաս տարին գերազանցող մասնագիտական փորձ ունեցող հոգերան-հետազոտողների մասնակցությամբ (n = 8):

Հարցարանի տեղայնացման գործընթացի ընթացքում նախատեվում էր երկկողմանի թարգմանություն, բառակապակցությունների և եզրույթների լեզվաբանական փորձաքննություն, փորձագիտական հարցում, պիլոտաժ թեստավորում և տվյալների համեմատական վիճակագրական մշակում: Թարգմանության գործընթացը բաղկացած էր հարցադարանի ռուսերեն տարբերակի (Տ.Կորնիլովա, 2013) և անգլերեն բնօրինակի (Լ.Մանն և հ/հ, 1997) հետ համեմատության փուլերից [4, 7]: Որոշումների կայացման գնահատման թեստի հեղինակները, մարդու որոշումների և ընտրության անձնային կարգավորման անհատական տարբերությունները նկարագրելու նպատակով առաջ են քաշում հետևյալ փոփոխականները՝ զգոնությունը, խուսափումը, գերզգոնությունը և պրոկրաստինացիան: Ընդհանուր առմամբ, այս որակների համադրությունը հեղինակները ուսումնասիրում են որպես որոշումների կայացման ոճ: Տ.Վ.Կորնիլովայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մելբուրնի հարցադարանի օգնությամբ ախտորոշվող որոշումների կայացման անհատական առանձնահատկությունները, կապ չունեն «IQ» հետ, բայց կապ ունեն մարդու «հուզական ինտելեկտի» (EQ) հետ: Մեր ուսումնասիրությունների ժամանակ կիրառվել է Ռավենի մեթոդիկան, որը բացահայտում է մտածողության տրամաբանական բաղադրիչը: Տվյալ թեստի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կոգնիտիվ փորձի տարբերակվածությունը կապ ունի ինտելեկտի այնպիսի առանձնահատկությունների հետ, ինչպիսիք են կոգնիտիվ բարդությունը և անձի վերբալ իրավասությունը[5]: Ենթադրվում է, որ այս բոլոր առանձնահատկությունները ազդեցություն ունեն գործունեության բարդ պայմաններում որոշումների կայացման արդյունավետության վրա:

Փորձարարական հարցման արդյունքների ամփոփումից և հիմնավորումների վերջնական ձևավորումից հետո, անց է կացվել ընտրված մասնակիցների թեստավորում: Ներկայացված իրավիճակներում վարքի կոփինգ ռազմավարության խմբային ցուցանիշների վիճակագրական վերլուծությունը համադրվել է նմանատիպ հետազոտության հետ: Ռացիոնալությունը որպես որոշումները կշռադատելու պատրաստակամություն հակասական բնույթի կապ ունի հարցա-

բանի սանդղակների հետ, իսկ ռիսկի դիմելու պատրաստակամությունը՝ բասացական կապեր արտահայտեց նրա բոլոր սանդղակների հետ:

Համեմատություն է անց կացվել փորձարարական և ստուգիչ խմբերի մեթոդիկաների չորս չափորոշիչների միջև: Ուսանողների ($\bar{x}_1$) և աշխատողների ($\bar{x}_2$) թեստավորման ցուցանիշները արտահայտվում են հետևյալ կերպ. զգոնություն – $\bar{x}_1$ = 11.05, $\bar{x}_2$ =15.25; գերզգոնություն – $\bar{x}_1$ = 5.67, $\bar{x}_2$ = 7.15; խուսափում – $\bar{x}_1$ =9.16, $\bar{x}_2$ =9.35; պրոկրաստինացիա – $\bar{x}_1$ = 11.01, $\bar{x}_2$ = 17.47. Երեք դեպքերում էլ միասեռ ցուցանիշների միջև տարբերությունները չեն գերադասել 3.0 միավորը ըստ մեթոդիկայի սանդղակի և չեն արտահայտել վիճակագրականորեն հաստատուն նշանակալի տարբերություն: Սա վկայում է որոշումների կայացման ժամանակ յուրահատուկ ռիսկերի հարաբերական ադեկվատ ընկալման մասին: Եվ միայն մի դեպքում է նկատվել հաստատուն տարբերություն՝ ոչ արդյունավետ ռազմավարության դեպքում՝ գերզգայունություն և զգայունություն ($P<0.001$). Այս առանձնահատկությունները կարելի է մեկնաբանել մեր ընտրված խմբերում իգական սեռի ուսանողների գերակշիռ քանակով, քանի որ դրանց միջին ցուցանիշները էականորեն տարբերվում են արական սեռի ուսանողների ցուցանիշներից: Սույն առանձնահատկությունը չի հաստատել է աշխատողների խմբում:

Թեստավորման արդյունքների վիճակագրական վերլուծության արդյունքում բացահայտվել են սեռական պատկանելիությամբ ուսանողների համար որոշումների կայացման որոշ առանձնահատկությունների արտահայտվածության օրինաչափություններ: Առավել նշանակալի կապեր բացահայտվել են ըստ երկու ցուցանիշների՝ զգոնություն և պրոկրաստինացիա: Սա թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ այս երկու պրոֆիլները առավել կայուն են թե կանանց թե տղամարդկանց համար: Ինչն էլ հաշվի կառնենք հետագա հետազոտական աշխատանքների ժամանակ: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ հարցարանը կողմնորոշված է, արդեն իսկ հաստատակամ ռազմավարություն ունեցող անձանց մոտ, բարդ և սպառնացող որոշումների կայացման հետ կապված սթրեսին տիրապետման հիմնական մոդելների բացահայտմանը:

Պետք է հաշվի առնել նաև, որ թեստավորման ընթացքում մասնակիցների մեծ մասը կողմնորոշվել է անորոշ իրավիճակում ընտրության, որոշումների կայացման վարքի ոճի իդեալականացման մոդելի վրա, որը կարող է չհամապատասխանել իրական պայմաններում նրանց վարքին՝ բնորոշ տվյալ անձին և պայմանավորված նրա փորձով: Սույն հանգամանքը պահանջում է արդյունքների ստուգում Ռավենի ռեպերտուարային ցանցի մեթոդիկայով լրացված թեստավորման կիրառմամբ, և պահպանելով ընտրության սեռական միասեռությունը: Ստացված տվյալները նույնպես համեմատել ենք այլ հետազոտությունների արդյունքների հետ, որոնց ժամանակ նույնպես ուսումնասիրվել են տարբեր իրավիճակներում որոշումների կայացման առանձնահատկությունները: Հետազոտության ժամանակ, որին նույնպես մասնակցում էին ուսանողներ, կիրառվել են բինար խնդիրներ՝ անհատական և խմբային աշխատանքների պայմաններում: Արդյունքում պարզ է դարձել, որ նախասիրությունների դինամիկան կախված է որոշումների կայացման ոճից [2]: Միաժամանակ, հետազոտություններից մեկի վերլուծությունից պարզ է դարձել, որ ստորջրյա նավարկությամբ պարապելու փորձից կախված, ընդհանուր ռիսկերի կոգնիտիվ ներկայացումը տարբեր կերպով կապված է ռացիոնալության, ռիսկի հանդեպ պատրաստվածության, ռիսկի նկատմամբ հակումի ինքնագնահատականի և ինքնատիրապետման ոճերի անձնային հատկություններով [3, էջ 212]:

Համեմատական հետազոտության արդյունքների ամփոփումը վկայում է այն մասին, որ դրանք մասնավորապես կրկնում են ռուսական ընտրված անկախ խմբերում ստացված տվյալները, ինչն էլ վկայում է ստացված արդյունքների հուսալիության մասին, և տարածում է որոշումների կայացման սույն պատերնը հայկական կոնտինգենտի վրա: Հետևաբար, հարցադարանի հարմարեցված տարբերակը Ռավենի մեթոդիկայի զուգակցությամբ կարող է կիրառվել հետագա հետազոտությունների ժամանակ՝ կապված անորոշ և ռիսկային իրավիճակներում որոշումների կայացման առանձնահատկությունների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Մ. Ավանեսյան, Փորձարարական հոգեբանություն. Ուսումնական ձեռնարկ, Եր., Էդիթ Պրինտ, 2010. - 288 էջ
2. Դ.Ռ. Հայրապետյան, Ա.Կ. Էբոյան. Անհատական և խմբային աշխատանքում որոշումների կայացման անձնային նախադրյալները// "Տեսական և կիրառական հոգեբանության արդի խնդիրները" միջազգային գիտաժողովի նյութեր – Եր., ԵՊՀ, 2011, էջ 391-393
3. Краснорядцева А. И. Отношение к риску у лиц, имеющих разный опыт занятий дайвингом // Материалы VI Межд. конф. молодых учёных «Психология – наука будущего», М.: Изд-во «ИП РАН», 2015, с. 212-215
4. Корнилова Т.В. Мельбурнский опросник принятия решений/Психологические исследования, 2013, Том 6, N 31, с.2-4
5. Прогрессивные матрицы Равена: методические рекомендации/Сост. и редакция О.Е. Мухордовой, Т.В. Шрейбер. Ижевск: Изд-во «Удмур. Ун-т», 2011. – 70с.
6. Санников А.И. О соотношении рефлексивности и параметров принятия решения// Science and Education a New Dimension. Pedagogy and Psychology, II(8), Issue: 16, 2014, с. 173-177
7. Mann L., Burnett P., Radford M., Ford S. The Melbourne Decision Making Questionnaire: An instrument for measuring patterns for coping with decisional conflict. Journal of Behavioral Decision Making, 1997, 10(1), p.1-19

COMPARATIVE ANALYSIS OF DECISION MAKING FEATURES

MARAT DURYAN

Post-graduate Student at the Chair of Psychology, RA Public Administration Academy

The objective of the study included the analysis of methodological approaches to the study of features of decision making in a complex activity, as well as the adaptation and comparative analysis of decision making in the Armenian version of the Melbourne questionnaire decision (MDMQ). Indicators of research performance style decision-making are considered in different groups.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ОСОБЕННОСТЕЙ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ

МАРАТ ДУРЯН

Соискатель кафедры психологии Академии государственного управления РА

Данный этап исследования предполагает анализ методических подходов к изучению особенностей принятия решения в сложных условиях деятельности, а также адаптационный и сравнительный анализ принятия решений в армянской версии вопросника Мельбурна (MDMQ). Рассмотрены и сравнены показатели стилей принятия решений в разных группах.